

ՀԵԼԼԵՆԻՍՏԱԿԱՆ ՇՐՋԱՆ

HELLENISTIC ERA

Հնադարեան (Անտիկ) փիլիսոփայութեան *Հելլենիստական շրջանը* կը յատկանշուի Մեծն Ալեքսանդրի (356 – 323 մ.թ.ա.) օրով Յունաստանի սահմաններու ընդարձակումով եւ հելլենական մշակոյթի (յունարենի եւ յունական մտածելակերպի) տարածմամբ: Հելլենիստական փիլիսոփայութիւնը շարունակուեցաւ նաեւ հռոմեական կայսրութեան շրջանին, մինչեւ Քրիստոնեայ Միջնադարու սկիզբը:

Հելլենիստական շրջանի փիլիսոփայական կարեւոր ուղղութիւններն են.-

- **Էպիկուրականութիւնը** (Epicureanism),
- **Ստոյիկութիւնը** (Stoicism), իր երեք (վաղ, միջին եւ ուշ) շրջաններով,
- **Կասկածապաշտութիւնը** կամ սկեպտիկութիւնը (Scepticism) եւ
- **Նոր-Պլատոնականութիւնը** (Neo-Platonism):

1. Էպիկուրեան դպրոցը

Էպիկուրեան դպրոցը կոչուած է նաեւ Կեպոս (յուն.՝ kēpos = պարտեզ): **Էպիկուրոս** (յուն.՝ Epikouros, 342 – 271 մ.թ.ա.) ծնած է Սամոս կղզիի վրայ ապա կը փոխադրուի Աթենք, ուր մ.թ.ա. 306-ին կը հիմնէ այս դպրոցը, իր տան պարտեզին մէջ: Դպրոցը կը գործէ մօտաւորապէս վեց դարեր, մինչեւ մեր թուարկութեան 4-րդ դարը: Էպիկուրոսի ժամանակակիցն ու աշակերտն Էր՝ **Հերմարքոս** (Hermarchus, յուն.՝ Hermarkhos 340 – 260 մ.թ.ա.), որ Էպիկուրոսի մահէն ետք կը ստանձնէ դպրոցի տնօրէնութիւնը:

Հետագային, Էպիկուրականութիւնը (Epicureanism) կը փոխադրուի Հռոմ: Հոն նշանաւոր կը դառնայ բանաստեղծ եւ փիլիսոփայ **Լուկրեցիոս** (Titus Lukretius Carus, 99 – 55 մ.թ.ա.), որ գրի առած է Էպիկուրոսի ուսմունքը:

2. Ստոյիկեան դպրոցը

Ստոյիկեան դպրոցը կոչուած է իրենց Աթենքի հաւաքավայրի անունով (յուն.՝ stoá poikilê, որ կը նշանակէ՝ սիւնազարդ սրահ): Հիմնադիրն է՝ յոյն փիլիսոփայ **Զենոն Կիտիոնցին** (Zeno of Citium, յուն.՝ Zénôn, 333 – 262 մ.թ.ա.):

Ստոյիկեան շարժումի ընթացքին (Ա. դար մ.թ.ա.), յոյներու կողմէ սկսած փիլիսոփայութիւնը կը փոխադրուի Հռոմ, որ քաղաքական տեսակետէն շատ աւելի զօրացած էր եւ դարձած՝ գերիզօր կայսրութիւն: